

Համառոտ գիտական հաղորդումներ

Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

ՊՏՂԱՏՈՒ ՄԱՌԵՐԻ ՔԼՈՐՈՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ
ՆՐԱ ԴԵՄ

Վերջին երկու-երեք տարում Նոր Բայազետի, Մարտունու, Բասար-դեշարի շրջանների կուտնտեսությունների պտղատու ալգիներում տարածվել է քլորոզ հիվանդությունը, որի պատճառով ծառերը խիստ տուժում են:

Պտղատու ալգում աճեցվող գրեթե բոլոր ծառատեսակները հիվանդանում են քլորոզով: Քլորոզի արտաքին նշանները տերևների, երբեմն էլ ընձյուղների դեղնելն են: Հիվանդության ժամանակ բույսերը թուլանում են, կանգ է առնում աճեցողությունը և նրանք չորանում են: Քլորոզով կարող է վարակվել ինչպես ամբողջ ծառը, այնպես էլ նրա առանձին ճյուղերը: Քլորոզը կարող է լինել երկարատև կամ խրոնիկական և կարճատև: Երկարատև քլորոզի դեպքում ծառը ամեն տարի հիվանդանում և երբ հիվանդությունը երկար է տևում, ծառը չորանում է: Կարճատև քլորոզը միջավայրի բարենպաստ պայմանների ազդեցության տակ որոշ ժամանակից հետո անցնում է:

Սովորաբար քլորոզով հիվանդ ծառերի նոր բացված տերևները լինում են նորմալ, կանաչ գույնի, որոշ ժամանակից հետո դրանք դեղնում են: Սկզբում դեղնում են տերևի գլխավոր ջղերի միջև ընկած մասերը, իսկ ջղերը և նրանց շուրջը գտնվող որոշ մասեր կանաչ են մնում: Հետագայում տերևաթիթեղը լրիվ դեղնում է, նրա վրա սկսում են երևալ հյուսվածքի չորացած մասեր, կանաչ են մնում միայն ջղերը և տերևակոթունը: Այսպիսի ուշ տերևներն ամբողջությամբ չորանում են և թափվում: Քլորոզի ժամանակ քայքայվում են քլորոֆիլի հատիկները, որոնց միջոցով կատարվում է բույսերի օդային սննդատությունը (ֆոտոսինթեզը): Այդ պատճառով քլորոզով հիվանդ բույսերը սննդի մշտական կարիք են զգում, տերևները, պտուղները թափվում են, հաճախ տեղի է ունենում ծաղկավիժում, ընձյուղները մնում են բարակ, բնավայառ մնում է փխրուն, որի հետևանքով հաճախ չի դիմանում ձմեռվա սառնամանիքներին և ցրտահարվում է:

Քլորոզի առաջացման հիմնական պատճառը հողում ծրկաթի միացությունների պակասն է կամ ջրում նրանց դժվար լուծելի լինելը, որի հետևանքով երկաթն անմատչելի է դառնում արմատների յուրացման համար: Քլորոզի պատճառ կարող է հանդիսանալ հողում ածխածնի քիմիական կրի և ջրի ավելցուկը, որի հետևանքով խախտվում է բույսի՝ հանքային նյութերով սնվելու պրոցեսը: Քլորոզը կարող է առաջանալ նաև միջավայրի այլ անբարենպաստ պայմանների և վատ ագրոտեխնիկայի հետևանքով:

Քլորոզի դեմ պայքարի միջոցառումներ առաջադրելիս նախ և առաջ պետք է պարզել, թե ինչից է առաջացել այն: Եթե պատճառը ջրի ավելացումն է, պետք է կանոնավորել ռոտացիոն կամ մեխիորատի միջոցառումներ կիրառել, եթե պատճառը երկաթի պակասությունից է, պետք է հիփանդ ծառերը մի քանի անգամ ջրել երկաթարջատով 1 տոկոսանոց լուծույթով, մեկ քառակուսի մետրին ոգտադարձելով 8—10 լիտր հեղուկ: Կարելի է տերևները սրսկել երկաթարջատով 0,5 տոկոսանոց լուծույթով: Պետք է փխրեցնել և պարարտացնել հողը:

Սև սումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր աշգիներում քլորոզն առաջանում է տարբեր պատճառներից: Ամենից առաջ աշգիները հիմնադրելիս ճիշտ չի բնութվում հողը: Այդու համար պիտանի են հատկապես ավազա-կավաքին և կավա-ավազային հողերը: Պիտանի չեն այն հողերը, որոնց կրաքին շերտը հողի մակերեսին շատ մոտիկ է գտնվում: Այդպիսի հողերում բույսերը գեղնում են և առաջ է գալիս քլորոզ: Այսպես է նոր Բալթիկի շրջանի նորագույն գյուղի կոլտնտեսության աշգու հողամասը: Այստեղ ոչ հետու անցյալում եղել է ծովի հատակ և վերերկրյա, հումուսով հարուստ հողաշերտը շատ փոքր է, ջրի աննորմալ սեփմի հետևանքով ծառերը հիփանդանում են քլորոզով:

Շրջանի էանջադրյալ, Գեղարքունիք գյուղերի կոլտնտեսություններին աշգիների հողերում գրունտային ջրերը շատ մոտիկ են գտնվում, որը պատճառ է դառնում քլորոզի առաջացման: Ջրելու ոչ ճիշտ սեփմի և մեթոդի պատճառով է, որ քլորոզ է առաջանում Կարմիր և Հալստատ գյուղերի կոլտնտեսությունների աշգիներում: Հայ առատ, նորագույն գյուղերի կոլտնտեսությունների աշգիներում միջարքային տարածությունների հողը միշտ չի ոգտադարձվում, աշգուկը ցանում են ծխախոտ, կարտոֆիլ, որոնք անընդհատ ջրվում են, այդ պատճառով էլ ծառերի տրամաները գտնվում են գերխոնավացման պայմաններում:

Անհրաժեշտ է այս աշգիների կողքով անցկացնել խոր առուներ, այս միջոցառումը կնպաստի աշգու հողի ցամաքեցմանը և գրունտային ջրերի մակարդակի իջեցմանը: Մյուս կողմից հարկավոր է վերջ տալ աշգում կարտոֆիլ կամ ծխախոտ մշակելուն: Կարելի է միջարքային տարածություններում մշակել թիթեռնածագկափոր, բանջարանոցային բույսեր, որոնք ջրի և սննդանյութերի նկատմամբ իրենց պահանջով չեն վնասում պտղատու ծառերին: Առհասարակ պետք է խույս տալ աշգին բաժակաձև կամ ողողման սխառմով ջրելուց, սրովհետև այդ ձևով հողը ջրվում է ոչ հավասարապես, երբեմն էլ որոշ մասերում ճահճուտ է առաջանում: Ջուրը պետք է տալ ակոսներով, որի համար միջարքային տարածությունների տարողջ երկարությամբ անց են կացվում 20—25 սմ խորությամբ ակոսներ՝ մեկը մյուսից 70 սմ հեռավորության վրա: Այս ձևով աշգին ջրվում է հավասարապես:

Բոլոր կոլտնտեսությունների աշգիներում քլորոզի առաջացմանը նպաստում են մոլախոտերը, որոնք առաջ են գալիս ծառերի մերձքնային տարածությունների անխնամ փճակի հետևանքով: Մերձքնային տարածությունների հողը չի փխրեցվում, մոլախոտերը չեն հեռացվում, որոնք հողից խլում են ծառի համար անհրաժեշտ սննդանյութերը, ջուրը և պատճառ դառնում նրանց թուլացման, իսկ մեծ մասամբ նաև ոչնչացման: Մոլախոտերը պետք է ոչնչաց-

նել վաղ դարձանից մինչև ուշ աշուն. այդ կարելի է անել ինչպես քաղհանի, այնպես էլ փխրեցման միջոցով (զգուշանալով արմատների կտրատումից), մինչդեռ այգեպանները բավարարվում են նրանով, որ ուղղակի ննձում են մերձքնային տարածությունների մոլախոտերը: Այդ դեպքում նրանց արմատները մնում են հողում և նորից շարունակում իրենց աճեցողությունը: Լեռնային շրջաններում ծառերը տնկելու առաջին տարում պետք է մերձքնային տարածությունը փխրեցնել 1 մետր տրամագծով, երկրորդ տարում պետք է հասցնել 1,5 մետրի, երրորդ տարում՝ 2 մետրի, չորրորդ տարում՝ 2,5 մետրի, հինգերորդ տարում՝ 3 մետրի, այնուհետև փխրեցումը պետք է ընդարձակել տարեկան կես մետրով, մինչև այն ժամանակ, երբ ծառը կդառնա 6—10 տարեկան: Պետք է նկատել, որ մեր բոլոր այգիներում այդ չի կատարվում, 10—12 տարեկան ծառերի մերձքնային տարածությունները 1,5 մետր տրամագծով հազիվ փխրեցված լինեն:

Այդուհողը 3—4 տարին մեկ աշնանը պետք է վարել 20—25 սմ խորությամբ, միաժամանակ մացնելով հողի մեջ օրգանական և հանքային պարարտանյութեր:

Պարզված է, որ քլորոզի նկատմամբ ավելի մեծ դիմացկունություն ունեն միջուրինյան խնձորենիներն ու տանձենիները: Այդ պատճառով այգին տնկելիս կամ նոր տնկիներ բերելիս պետք է առաջնությունը տալ հատկապես միջուրինյան սորտերին, որոնք աչքի են ընկնում նաև իրենց ցրտադիմացկունությամբ և բերքատվությամբ:

Քլորոզի դեմ կարելի է պայքարել, հաշվի առնելով նաև պարարտացման ճիշտ ուժիմը: Նկատվում է, որ տարիներ շարունակ այդուհողը չեն պարարտացնում կամ միակողմանի են պարարտացնում (օրինակ՝ ամեն տարի մացնում են ամոնիակային սելիտրա). այս հանգամանքն առաջացնում է հողի ուժասպառություն կամ սննդանյութերի միակողմանի կուտակում, որի հետևանքով խախտվում է բույսերի ներմալ հանքային սննդառությունը: Մեր փորձերը ցույց են տալիս, որ հողում սննդանյութերի կոմպլեքս ստեղծելով, կարելի է վերացնել քլորոզի ազդեցությունը: Հատկապես պետք է օգտագործել դոմադրահեղուկ՝ ծառին 2—3 դույլի չափով, սուպերֆոսֆատ և կալիական պարարտանյութեր (վերջինները հողում մացնել աշնանից):

Քլորոզի ժամանակ թուլանում է բույսի դիմադրողականությունը հիվանդությունների և վնասատուների նկատմամբ, որոնք արագացնում են բույսի ոչնչացումը: Այդ է պատճառը, որ քլորոզով հիվանդ բույսերի մոտ կարելի է հեշտությամբ տեսնել լվիճների բազմացում, սնկային տարրեր հիվանդությունների և այլն:

Ազրոտեխնիկական, քիմիական միջոցառումների, ջրման և սննդառությամբ ճիշտ կազմակերպելու միջոցով հնարավոր էլինի կանխել բույսերի քլորոզ հիվանդությունը և նրա վնասակար ազդեցությունը:

Վ. Մ. Մուրտուզի անվան Սրեանի պետական
համալսարանի կենսաբանական ֆակուլտետի
բույսերի օրոտեխնիկայի և մորֆոլոգիայի
ամբիոն

Մտացվել է 27 IX 1956 թ.